

Ո՞ՐՆ ԷՐ ԲԱԶՈՒՆՈՅԻՆԻ ՆԱՏԱՎԱՅՐԸ ԱՅՈՒՆԻՔՈՒՄ

Ս.Գ. Չախվերդյան

13-րդ դարում մոնղոլների տիրապետության օրոք Անդրկովկասում գերագույն զինվորական իշխանությունը գտնվում էր Բաչու նոյինի ձեռքին: Նա գերադասում էր լինել իր զինվորների հետ: Չորքի ամառային բանակատեղին եղել է Սյունիքում (Ստ. Օրբելյան, Կիր. Գանձակեցի): Հեղինակը հիմնավորում է, որ Սյունիքում Բաչուի նստավայրը եղել է Չագեծոր գյուղը:

Մոնղոլական տիրապետությունը Հայաստանում հաստատվեց XIII դարի I կեսին: Սյունիքի գավառները նվաճեց Ասլան նոյինը՝ Այդ ժամանակ նահանգի գահերեց իշխանն էր Լիպարիտ Օրբելյանի որդի Ելիկունը /1225-1253թթ./: Ելիկունն ամրացավ Սյունիքի անառիկ բերդերից մեկում և պատրաստվում էր դիմադրել մոնղոլներին: Ասլան նոյինը նրա մոտ պատգամավոր ուղարկեց՝ ասելով. «Մեզ հետ հաշտվիր, եկ մեզ մոտ ու մեր կողմից բազում բարությունների կարժանանաս» [5, էջ 323]: Հաշտությունը կայանում է և Սյունիքը զերծ է մնում ավերումից ու ասպատակությունից: Մոնղոլները վերահաստատում են Օրբելյանների սեփականության իրավունքը ողջ Սյունիքի վրա:

Մոնղոլների տիրապետության ժամանակ Սյունիքը շարունակում էր տնտեսական, մշակութային ու հոգևոր կյանքի վերելքը: Այդ վերելքը իր ծայրակետին է հասնում Սմբատ Օրբելյանի իշխանության ժամանակ /1253-1273թթ./:

Մոնղոլների օրոք Անդրկովկասը վարչական տեսակետից վերածվեց մոնղոլական կուսակալության, իսկ Սյունիքը դարձավ առանձին վարչատարածքային միավոր՝ թունան: Սյունիքի քաղաքական, վարչական կենտրոնը Վայոց ձորի Եղեգիս ավանն էր: Մոնղոլական կուսակալության գերագույն զինվորական իշխանությունը գտնվում էր Բաչու նոյինի ձեռքում, նա 1242թ. փոխարինել է Չարմաղանին: Անդրկովկասի կուսակալության շրջանակներում Բաչու նոյինն ուներ անսահմանափակ իշխանություն և պատմիչի խոսքերով «ամենքի վրա իշխում էր որպես թագավոր» [5, էջ 325]:

Մոնղոլական կուսակալության կենտրոնը Թավրիզի մոտ գտնվող Գանձակ քաղաքն էր, սակայն Բաչուն գերադասեց լինել բանակի հետ, նստել Սյունյաց լեռներում: Օրբելյանը գրում է. «Նա /Բաչուն-Հ.Ս./ իր բանակով նստած էր Հաբանդ գավառում, Չագեծորի մուտքի վրա» [5, էջ 325]:

Բաչու նոյինի սյունիքյան նստավայրի մասին, թեկուզ հպանցիկ, հիշատակություն ունի նաև Կիր. Գանձակեցի պատմիչը: Սակայն այդ հիշատակությունն որոշակի մեկնաբանման կարիք ունի: Կիր. Գանձակեցին մեջբերում է մի հետաքրքրական երկխոսություն, որ տեղի է ունեցել արաբ Ղիաթադին սուլթանի և Բաչու նոյինի միջև: Սուլթանը պատվիրակ է ուղարկում մոնղոլների զորքի ձմեռանոց Սուղանի դաշտավայր ու պատվիրակի բերանով հոխորտում. «Սուլթանը պատրաստվել է ամառվանից հետո եկող ձմեռը այստեղ՝

* Նոյին կամ նուրի մոնղոլերեն բառ է, նշանակում է «բյուրապետ, արքայորդի», այդպես էին նաև կոչում մոնղոլ բարձրաստիճան անձանց:

Մուղանի դաշտում, կանանցով և զորքերով ձմեռելու»: Բաշու նոյինի պատասխանը կարճ ու կտրուկ էր. «Մեծ – մեծ բարբառեցիք, սակայն ում աստված կտա, նա էլ կհաղթի»: Պատմիչն այնուհետև շարունակում է «Իսկ նրանք /մոնղոլները – Ա.Յ./ բնավ չչտապեցին, այլ հանգիստ հավաքեցին իրենց և իրենց իշխանության ներքո գտնվող զորքերը, եկան մեր Յայաստան աշխարհը՝ մի խոտավետ վայր ամբողջ ժողովրդով: Գիրացրին ձիերը և ապա դանդաղ մոտեցան այն տեղին, ուր սուլթանի բանակն էր գտնվում» [1, էջ 201-202]: Բաշուի այդ արշավանքը տեղի է ունեցել 1242թ.: Սրընթաց գրոհներով Բաշուն կործանիչ հարված է հասցնում Ռումի սելջուկյան սուլթանությանը և պայմանավորում նրա վերջնական անկումը [2, էջ 416]: Հաղթական ճակատամարտից հետո մոնղոլները կրկին վերադարձան իրենց կայանատեղերը: Եվ այսպես, ըստ Գանձակեցու, Բաշու նոյինը, չչտապելով պատերազմել, գալիս է Յայաստան՝ «մի խոտավետ վայր»: Կասկած չկա, որ դա մոնղոլների ձմեռոց Մուղանի դաշտավայրից ոչ հեռու գտնվող Սյունյաց ամառային արոտառատ սարերն էին: Կ. Գանձակեցին Կիլիկիայի հայոց Յեթում Ա թագավորի /1226-1270թթ./ Մոնղոլիայի մայրաքաղաք այցելելու /1254թ./ առիթով նշում է, որ նա երկու անգամ՝ մեկնելիս և վերադարձին, հանդիպել է Բաշու նոյինին: Առաջին անգամ նա Բաշուին հանդիպում է Կարսում, իսկ երկրորդ անգամ՝ Սիսիանում [1, էջ 265]: Պարզ է, որ Գանձակեցու նշած Սիսիանը Սիսական – Ծղուկ գավառը չէ, Սիսիան ասելով՝ պատմիչը նկատի ուներ Սյունյաց աշխարհը: Օրբեյյանը ավելի ճշգրիտ է նշում Բաշու նոյինի նստավայրի տեղը՝ «ի գլուխ Չագեձորոյ»: Ուրեմն, Յեթում Ա հայոց թագավորը Բաշու նոյինին հանդիպելու համար, Մոնղոլիայից ետ դարձի ճանապարհին, եկել է Չագեձոր՝ Վարարակն գետի հովիտը, ուր այսօր փռված են Գորիս քաղաքը, Վերիշեն ու Ակներ գյուղերը: Հարց է ծագում. կիլոմետրեր ձգվող Չագեձորի հովտի ո՞ր մասում կամ այդ ձորի շրջակայքում ծվարած 5-6 բնակավայրերից ո՞ր մեկում կարող էր նստել կամ բանակել Բաշուն:

Չագեձորի կամ Վարակնի հովիտը շուրջ 10 կմ երկարությամբ, 2-3 կմ լայնությամբ, ծովի մակարդակից 1400-1600 մ բարձրության վրա գտնվող հովիտ է, որի լանջերը ակոսում են մի քանի երկար ու խոր ձորեր, դրանցում ևս եղել են բնակավայրեր: Կարծում ենք, որ Բաշուի բանակատեղի-նստավայրը եղել է հովտի հյուսիսային մասը, որտեղ խոտառատ, ընդարձակ արոտավայրերը կարող էին լիովին բավարարել մոնղոլական բանակի կարիքները և նույնիսկ «գիրացնել ձիերը»: հարևանությամբ այդ հողատարածքում էին գտնվում Օրբեյյանի նշած՝ Տաթևին հարկատու Ականա, Նախանձափոր, Չագեձոր բնակավայրերը: Դրանցից խոշորը եղել է 12 միավոր հարկ վճարող Չագեձորը: Այստեղ է եղել նաև պատմիչի հիշատակած Չագեձորի կամ Հաբանդա հայտնի բերդը:

* Յեթում Ա թագավորը Սյունիք է մտել հարավից՝ Թավրիզից դուրս գալով անցել է Արաքս գետը: Չագեձորում Բաշու նոյինին հանդիպելուց հետո նա գնացել է Արագածոտն գավառի Վարդենիս գյուղ՝ Արայի լեռան դիմաց, ուր նա, Մոնղոլիա մեկնելու ճանապարհին «Քուրդ անունով հայ իշխանի մոտ էր թողել իր ինչքն ու գույքը»:

* Չագեձոր կամ Չագաձոր տեղանունը Օրբեյյանը գտնում է, որ ծագել է Չագ նահապետի անունից: Յետագոտողներ այն նույնացնում են ներկայիս Վերիշենի հետ: Վերիշենը բնակավայրի հին անունը չէ, այն չի հիշատակվում Օրբեյյանի գյուղացուցակում:

Որ Չագեծորը եղել է Բաչու նոյինի, եթե ոչ մշտական, ապա ամենամյա ամառանոց-նստավայրը, մենք համոզվում ենք ուրիշ փաստերից: Այսպես, Բաչուն Չարմաղանին փոխարինել է 1242թ.: 1254թ. Յեթում Ա հայոց թագավորը եկել է Սյունիք՝ Չագեծոր ու հանդիպել Բաչուին: Հայկական և վրացական պատմական աղբյուրները Բաչուի մասին հիշատակում են 1249թ. կազմակերպված հակամոնղոլական ապստամբությունը նախապատրաստության առիթով: Հայ և վրաց իշխանների կողմից կազմվում է ապստամբության մանրամասն պլան: Սակայն ապստամբության նախապատրաստությունն հայտնի է դառնում Բաչուին: Մոնղոլները պատժիչ ջոկատներ են ուղարկում Վրաստան և կանխում ապստամբությունը: Կատարվում են ձերբակալություններ: Ձերբակալվում է նաև Սվանեթիայի Դավիթ Նարին թագավորը /1247-1293թթ./ և որպես կալանավոր բերվում Բաչու Նոյինի նստավայր՝ Չագեծոր: «Այս Բաչու նոյինն իր ձեռքն էր գցել Սոնաց թագավոր Դավթին [3, էջ 245], որը գտնվում էր նրա բանակում, կալանքի մեջ», - գրում է Օրբելյանը [5, էջ 325]: Սակայն վրաց Դավիթ թագավորին Չագեծորից հաջողվում է փախչել և, հավանաբար, ոչ առանց Սյունյաց իշխանների օգնության: Թագավորի այդ փախուստը վրացագետները /Բրոսսե, Ջավախաշվիլի/ տեղադրում են 1256-1258թթ. արանքում: Այսինքն վրաց թագավորը Չագեծորում կալանված մնացել է 7 կամ 9 տարի՝ եթե ընդունենք, որ նրա ձերբակալությունը կատարվել է 1249թ.: Փախուստի մասին տեղյակ էր և Սյունիքի գահերեց իշխան Սմբատը, թեպետ Օրբելյան պատմիչը փորձում է ցույց տալ, որ իբր Սմբատը փախուստի մասին իմացել է միջանկյալ ձևով՝ փախչող վրաց թագավորին ճանաչած Վայոց ձորի Գուտենի գյուղի տանուտերի միջոցով [5, էջ 325-326]: Իսկ ահա թե ինչ է գրում վրաց ժամանակագիրը. «Այս Սմբատի թոռ Սմբատը հանդիպեց Դավթին և տարավ իր տուն: Դավիթը խնդրեց Սմբատին, որպեսզի չհայտնի իր ով լինելը և ուղարկի Ափխազք: Մոր՝ թագուհի Ռուսուդանի կողմից տված պատվական ակըր տվեց Սմբատին: Թաթարների ահից նույն հասարակ զգեստով ուղարկեց նրան» [4, էջ 103]: Այսպիսով տեսնում ենք, որ Սմբատ գահերեց իշխանը գիտեր Չագեծորի կալանավայրից վրաց թագավորի փախուստի մասին, իսկ ըստ վրաց ժամանակագրի՝ նույնիսկ հանդիպել է նրան: Նա գուցե նախօրոք չի իմացել փախուստի մասին: Ամեն դեպքում Սմբատ իշխանը արգելք չի հանդիսացել վրաց թագավորի փախուստի համար: Հավանաբար նաև այդ պատճառով Սյունյաց իշխանը ամբաստանվում է Բաչուի կողմից և ուղարկվում Կարակորում՝ Մանգուխանի մոտ: Այնտեղ Սմբատը արդարանում է, վրաց թագավորից ստացած կարմիր գույնի ակըր նվիրում Մանգուխանին և հայրենիք վերադառնում ավելի մեծ իրավունքներով:

Գրականություն

1. Գանձակեցի Կիր., Հայոց պատմություն, Երևան, 1982թ.:
2. Մութաֆյան Կ., Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, Երևան, 2001թ.:
3. Չամչյան Մ., Հայոց պատմություն, Երևան, հ.գ., 1984թ.:
4. Վրաց ժամանակագրություն /1207-1318/, Երևան, 1971թ.:
5. Օրբելյան Ստ., Սյունիքի պատմություն, Երևան, 1986թ.:

* Բաչու նոյինը ձմռանը, անտարակույս, բանակը տարել է ձմեռոց՝ Մուղանի դաշտավայր: